# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ ԱՍՀՆ Սոցիալական ապահովության պետական ծառայությունը ստորև ներկայացնում է իր կարիքների համար արխիվացման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ՇՀԾՁԲ-17/12 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2017 թվականի մայիսի 10-ին կնքված N ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ՇՀԾՁԲ-17/12 պայմանագրում 2017 թվականի դեկտեմբերի 14-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1 Կատարողի գրավոր դիմումի հիման վրա, Պայմանագրով նախատեսված ծառայությունները պատշաճ և ամբողջ ծավալով մատուցելու համար անհրաժեշտություն է առաջացել երկարաձգել պայմանագրի կատարման ժամկետը:

Փոփոխության նկարագրություն: Կողմերը որոշեցին Պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով:

Փոփոխության հիմնավորում: Գնումների մասին օրենսդրության և Պայմանագրի 7.3 և 7.4 կետի համաձայն:

Փոփոխության առաջացման պատճառ N 2 Կանխավճարի տրամադրում, քանի որ Ծառայությունների մատուցման ավարտը անցնում է հաջորդ բյուջետային տարի:

Փոփոխության նկարագրություն Կատարողին տրամադրվում է կանխավճար բանկային երաշխիք ներկայացնելու պայմանով:

Փոփոխության հիմնավորում Գնումների մասին օրենսդրության և Պայմանագրի 7.3 և 7.4 կետի համաձայն

Պատվիրատու՝ ***ՀՀ ԱՍՀՆ Սոցիալական ապահովության պետական ծառայություն***

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

**2017թ. մայիսի 10-ին կնքված N ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԾՀԾՁԲ-17/12 գնման պայմանագրի**

**ք. Երևան** «14» « 12 » 2017թ.

ՀՀ ԱՍՀՆ Սոցիալական ապահովության պետական ծառայությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ս. Մինասյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը, ի դեմս հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Աբրահամյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև Կողմեր, հիմք ընդունելով Կողմերի միջև 10/05/2017թ. կնքված N ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԾՀԾՁԲ-17/12 պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.3 և 7.4 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

### 1.Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը

1.Կողմերը որոշեցին՝

1.1 ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԾՀԾՁԲ-17/12 ծածկագրով Պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 4-րդ բաժինը խմբագրել, բաժնում ավելացնելով նոր կետ հետևյալ բովանդակությամբ.

«4.1.1 Պայմանագրի գնի 100%-ը՝ 30424590 (երեսուն միլիոն չորս հարյուր քսանչորս հազար հինգ հարյուր իննսուն) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին որպես կանխավճար՝ մինչև 15.12.2017 թվականը բանկային երաշխիք ներկայացնելու պայմանով: Բանկային երաշխիքի գործողության ժամկետը սահմանվում է առնվազն մինչև 01.03.2018 թվականը: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը» :

1.2 Ծառայությունների մատուցման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով՝ Պայմանագրի թիվ 1 հավելվածի 6-րդ կետում ամրագրված աշխատանքների ավարտը՝ «20.12.2017թ.» թվերը խմբագրել, սահմանելով աշխատանքների ավարտը՝ «19.01.2018թ.» թվերով:

1.3 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Ծառայությունների մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (1) մեկ էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ ԱՍՀՆ Սոցիալական ապահովության ծառայություն | «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ |
| ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 13 | ՀՀ, ք. Երևան, Կ. Ուլնեցի 68 |
| ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Ձեյթուն մ/ճ |
| Հ/Հ 900011556355 | Հ/Հ 163518012543 |
| ՀՎՀՀ 02505511 | ՀՎՀՀ 02602449 |
| Աշխատակազմի ղեկավար՝ | Գործադիր տնօրեն՝ |
| Ս. Մինասյան | Ա. Աբրահամյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |